

Հռոմեական Ստոյիկներու (ինչպէս՝ **Սենեկա**) եւ Նոր-Պլատոնականներու (ինչպէս՝ **Պլոտինոս**) կողմէ արծարծուած կարգ մը գաղափարները, Զրիստոնեայ Միջնադարուն ընկալուեցան եւ աւելի շեշտուեցան: Օրինակ, հնադարեան կարգ մը փիլիսոփայական ուղղութիւններու համաձայն, մարդը, իր նպատակին՝ երջանկութեան կամ երանութեան հասնելու համար պէտք է ձերբազատի երկրային նիւթական վայելքներէն ու ապրի լոկ ճգնաւորական կեանք մը: Զրիստոնեայ Միջնադարուն, նոյն նպատակին հասնելու համար, չի բաւեր ճգնաւորական կեանքն ու մարդկային բանականութիւնը, այլ անպայման կարիքը կը տեսնուի՝ աստուածային ողորմածութեան: Տակաւին, Զրիստոնէութեան համաձայն, մարդու գլխաւոր նպատակը պէտք է ըլլայ ո՛չ թէ միայն աստեանական կեանքի երջանկութիւն մը՝ երկրի վրայ, այլեւ՝ աստուածային անդենական (անգլ.՝ Afterlife, գերմ.՝ Jenseits) արքայութեան մէջ:

Այստեղ հարկ է կրկին յիշեցնել, որ այս աշխատասիրութիւնը, «փիլիսոփայական ակնարկ» մը ըլլալով զուտ կրօնական կամ աստուածաբանական հարցերը չի մանրամասներ: Այսուհանդերձ, փիլիսոփայական եւ աստուածաբանական բարոյագիտութեանց մարզերէն ներս գոյութիւն ունին հասարակաց ընդհանուր նիւթեր, որոնք երկու մարզերուն համար յոյժ կարեւորութիւն ունին, ինչպէս առաքինութիւններն ու մոլութիւնները (մեղքերը), բարին ու չարը, ազատութիւնն ու արդարութիւնը, խիղճն ու կամքը, եւայլն...:

Միջնադարու փիլիսոփաները, ընդհանրապէս աստուածաբաններ եղած են. իսկ «աստուածաբանական փիլիսոփայութիւնը» կարելի է բաժնել երկու շրջաններու.-

- **Հայրաբանական շրջան** (Patristics, կազմուած՝ յունարէն patēr, լատիներէն pater = հայր եզրէն) ապա՝
- **Դպրական շրջան** (կամ Սքոլաստիկ, scholastic, կազմուած՝ յունարէն skholê, լատիներէն schola = դպրոց եզրէն):



1.- ՀԱՅՐԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Հայրաբանական շրջանը (2-րդ – 8-րդ դար) կը սկսի Հին Դարու վերջաւորութեան, Յիսուսի առաքեալներէն անմիջապէս ետք, երբ «եկեղեցւոյ հայրեր» կը կազմակերպէին ու կը հաստատէին եկեղեցին եւ քրիստոնէական ուսմունքը, ինչպէս նաեւ կը պաշտպանէին ու կը տարածէին այս Նոր կրօնը: Այս շրջանի եւ տարբեր կրօնական կեդրոններու մէջ յայտնի բազմաթիւ եկեղեցւոյ հայրերու կողքին ամենանշանաւոր եւ ազդեցիկ աստուածաբան - փիլիսոփան կը հանդիսանայ՝ **Աւրելիոս Օգոստինոսը**:

➤ **Աւրելիոս Օգոստինոս**

Աւրելիոս Օգոստինոս (Aurelius Augustinus, 354 – 430 թ.) ծնած է հիւսիսային Ափրիկէի Թագաստը (Thagaste, այսօր՝ Ալժերիոյ Սուք-Աիրաս) քաղաքը, որ